

Գործարար շահերի պաշտպանության ցանցի տեղեկատու

Իրադարձություններ/Նորություններ/Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ

Գործարար շահերի պաշտպանության ցանցի անդամների հանդիպում



Մ.թ. հունիսի 15-ին տեղի ունեցավ Գործարար շահերի պաշտպանության ցանցի անդամների հանդիպում: Ցանցի անդամները տեղեկացվեցին ծրագրի ընթացիկ զարգացումների մասին. մասնավորապես՝ աշխատանքային հարցազրույցների արդյունքների մասին, որոնք ուղղված էին նույնացնելու Ցանցի կարևորագույն խնդիրները, գործունեության պլանավորումը: Ինչպես նաև քննարկվեցին հունիսի 22-23-ին կայանալիք «Ցանցի ինստիտուցիոնալ զարգացման» սեմինարի նախապատրաստական աշխատանքների հետ կապված հարցերը: Երևանում և մարզերում տարբեր կազմակերպությունների հետ կայացած աշխատանքային հանդիպումների նախնական արդյունքները, որոնք ուղղված էին նույնացնելու ցանցի նոր անդամների ներգրավման, ինչպես նաև գալիք սեմինարի թեմաների ընտրության խնդիրներին, նույնպես ներկայացվեցին հանդիպման ժամանակ:

Հանդիպմանը մասնակցում էին Ցանցի անդամ և հավակնորդ անդամ կազմակերպությունների 18 ներկայացուցիչներ: Օրակարգում, ի թիվս այլ հարցերի, ընդգրկված էր նաև Ցանցի անդամ կազմակերպությունների մասնակցությունը Արևելյան գործընկերության Ազգային հարթակի աշխատանքային խմբերում ընդգրկվելու հարցը:

Հանդիպման մասնակիցներին ներկայացվեց նաև վերջերս ընդունված «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Գործարար շահերի պաշտպանության ցանցի անդամների հանդիպում

Գործարար շահերի պաշտպանության ցանցի հզորացմանը նվիրված սեմինար

Ռազմավարության զարգացման սեմինար

ՀՀ Օրենքը «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»
ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ

կատարելու մասին

2010 թ. հունիսի 9

Երևան

ՀՕ-64-Ն



Ս.թ. հունիսի 22-23-ը, Երեւանում, տեղի ունեցավ երկօրյա սեմինար՝ նվիրված գործարար շահերի պաշտպանության ցանցի ինստիտուցիոնալ զարգացմանը: Միջոցառումը անցկացվեց «Մասնավոր ձեռներեցության միջազգային կենտրոնի» Ռ-ումինիայի տարածաշրջանային գրասենյակի մասնագետների օժանդակությամբ (փոխտնօրեն Կարմեն Ստանիլա, խորհրդատու Կորինա Դրագոմիրեսկու):

Սեմինարի ընթացքում մասնակիցների կողմից քննարկվեցին Յանցի առաքելությանը, նպատակներին, խնդիրներին, իրավական կարգավիճակին և կառուցվածքին վերաբերող հարցերը: Քննարկվեցին նաև Յանցի քարտուղարության, որպես համակարգող և գործադիր մարմնի, հարցը և Յանցին անդամակցելու ընդհանուր սկզբունքները: «Մասնավոր ձեռներեցության միջազգային կենտրոնի» ներկայացուցիչները ներկայացրին տարածաշրջանի նմանատիպ նախաձեռնություններից քաղած դասերը և լավագույն փորձերը, ներառյալ՝ Ռ-ումինիայի, Մոլդովայի և Մոնտենեգրոյի կոալիցիաների կառուցման փորձերը:



Յանցի ինստիտուցիոնալ զարգացման վերաբերյալ մասնակիցների արտահայտած առաջարկություններն ու կարծիքները հետագայում կներառվեն ուղեցույցի նախնական տարբերակի մեջ, որը կպատրաստվի Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ասոցիացիայի կողմից և կտարածվի Յանցի անդամ կազմակերպությունների միջև: Յանցի անդամներից ստացված արձագանքների (մեկնաբանությունների, առաջարկությունների, խորհուրդների) հիման վրա կբարելավվի Ուղեցույցի նախնական տարբերակը և կներկայացվի ցանցի անդամներին հաջորդ սեմինարի ընթացքում:



Ռ-ազմավարության զարգացման սեմինար



Հունիսի 24-ին անցկացվեց ռազմավարության զարգացման սեմինար՝ «Մասնավոր ձեռներեցության միջազգային կենտրոնի» Ռ-ումինիայի տարածաշրջանային գրասենյակի ներկայացուցիչների և ս.թ. մայիսին Ռ-ումինիայում կայացած Կովկաս-Բալկաններ տարածաշրջանային ծրագրի հայ դարձնթացավարների համատեղ ուժերով: Մասնակիցները ներկայացրին իրենց շնորհանդեսները՝ ուղղված օժանդակելու Յանցի շահերի պաշտպանության, ռազմավարության և կայունության հարցերի ձևավորմանը:



AFIC

Օտարերկրյա Ներդրումների և Համագերծակցության Ասոցիացիա



Մասնավոր Ձեռներեցության Միջազգային Կենտրոն (ԱՄՆ)